Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

Պ-015-18.02.2019,15.04.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՑ 2-Ը ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. **Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքով կարգավորվում են 2008 թվականի փետրվարի 19-ին Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքների կապակցությամբ բողոքի հավաքները ցրելու գործողությունների ընթացքում՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. **Աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձինք**

1. Աջակցություն ստանալու իրավունք ունի՝

1) սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի պատճառով զոհված (մահացած) անձի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով իրավահաջորդի կարգավիճակ ունեցող անձը.

2) այն անձը, որի առողջությանը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս: Անձի առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը հաստատվում են դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ:2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ իր ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ծանր կամ միջին ծանրության վնաս ստացած անձն աջակցություն ստանալու իրավունք ունի, եթե նշված գործողություններին իր մասնակցության առնչությամբ չի ենթարկվել քրեական հետապնդման, ինչպես նաև նրա նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող հիմքով կամ կայացվել է արդարացման դատավճիռ:

Հոդված 3. **Աջակցության տրամադրումը**

1. Աջակցության ձևը, չափը և տրամադրման կարգը, ինչպես նաև աջակցության տրամադրման համար դիմումի ձևը, կցվող փաստաթղթերի ցանկը և քննարկման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ:

2. Աջակցություն ստանալու իրավուք ունեցող անձինք դիմումը կարող են ներկայացնել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում:

Հոդված 4. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

2. Կառավարությունը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Եթե սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված անձի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակվում է, ապա տվյալ անձին աջակցություն

տրամադրելու համար դիմումը քննարկվում է նրա նկատմամբ քրեական հետապնդման հարցը որոշելուց հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սույն նախագիծը կարգավորում է 2008 թվականի փետրվարի 19-ին Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքների կապակցությամբ բողոքի հավաքները ցրելու գործողությունների ընթացքում՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Նախագծի նպատակն է 2008 թվականի մարտի 1-2 տեղի ունեցած իրադարձություններից 11 տարի անց պատշաճ ուշադրության արժանացնել տարիներ շարունակ անտեսված և հարազատների կորստից հետո մինչ օրս սոցիալական, առողջական, հոգեբանական խորը խնդիրների առաջ կանգնած զոհված (մահացած) անձանց ընտանիքներին և առողջությանը վնաս կրած անձանց:

Սույն նախագծի ընդունումը նաև հասարակական-քաղաքական նշանակություն ունի, քանի որ այն համահունչ է Ազգային ժողովի օրակարգում գտնվող անցումային արդարադատության շրջանակներում ձեռնարկվելիք այն միջոցների և հնարավորությունների ստեղծման նպատակին, որը նպատակաուղղված է քաղաքացիների սահմանադրական խախտված իրավունքների և ազատությունների, քաղաքացիական համերաշխության և պետական ինստիտուտների հանդեպ վստահության վերականգնմանը:

Աջակցությունը տրամադրվում է նշված գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի պատճառով զոհված (մահացած) անձի՝ Հայաստանի

Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով իրավահաջորդի կարգավիճակ ունեցող անձին և այն անձին, որի առողջությանը նշված գործողությունների ժամանակ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս:

Աջակցության ձևը, չափը, տրամադրման կարգը, ինչպես նաև աջակցության տրամադրման համար դիմումներին կցվող փաստաթղթերի ցանկը և քննարկման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ՝ օրենքը ուժի մեջ մտնելուց եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՑ 2-Ը ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-015-18.02.2019,15.04.2019-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՑ 2-Ը ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են 2008 թվականի փետրվարի 19-ին ~~Հայաստանի~~ Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքների կապակցությամբ բողոքի հավաքները ցրելու գործողությունների ընթացքում՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձինք

1. Աջակցություն ստանալու իրավունք ունի՝

1) սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի պատճառով զոհված (մահացած) անձի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով իրավահաջորդի կարգավիճակ ունեցող անձը.

2) այն անձը, որի առողջությանը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս:

Անձի առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը հաստատվում են դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ իր ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ծանր կամ միջին ծանրության վնաս ստացած անձն աջակցություն ստանալու իրավունք ունի, եթե նշված գործողություններին իր մասնակցության առնչությամբ չի ենթարկվել քրեական հետապնդման, ինչպես նաև նրա նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող հիմքով կամ կայացվել է արդարացման դատավճիռ:

Հոդված 3. Աջակցության տրամադրումը

1. Աջակցության ձևը, չափը և տրամադրման կարգը, ինչպես նաև աջակցության տրամադրման համար դիմումի ձևը, կցվող փաստաթղթերի ցանկը և քննարկման կարգը սահմանվում են ~~Հայաստանի Հանրապետության~~ Կկառավարության որոշմամբ:

2. Աջակցություն ստանալու իրավուք ունեցող անձինք դիմումը կարող են ներկայացնել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ~~Հայաստանի Հանրապետության~~ Կկառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

3. ***Եթե սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված անձի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակվում է, ապա տվյալ անձին աջակցություն տրամադրելու համար դիմումը քննարկվում է նրա նկատմամբ քրեական հետապնդման հարցը որոշելուց հետո:***

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~
~~ՕՐԵՆՔԸ~~

~~2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՑ 2-Ը ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՁԱՆՑ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ~~

~~Սույն օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետությունում 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ անձանց կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումն է:~~

~~ԳԼՈՒԽ 1~~

~~ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ~~

~~Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան~~

~~1. Սույն օրենքով կարգավորվում են 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երեւան քաղաքում 2008թ. ի փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքների կապակցությամբ բողոքի ցույցերը ցրելու հետեւանքով անձանց կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները:~~

~~Հոդված 2. Հատուցման պայմանները~~

~~1. Սույն օրենքի իմաստով հատուցման իրավունք ունեն այն անձինք, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել սույն օրենքի 1-ին հոդվածում նշված իրադարձությունների հետեւանքով:~~

~~2. Սույն օրենքի իմաստով.~~

~~1) անձի կյանքին պատճառված վնաս է համարվում անձի մահանալը.~~

~~2) անձի առողջությանը պատճառված վնաս է համարվում ստացված վնասվածքի կամ խեղման հետեւանքով անձի ստացած միջին, ծանր եւ առանձնապես ծանր վնասվածքը:~~

~~3. Մահացած անձանց մասով հատուցման պահանջ կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով տվյալ տուժողի իրավահաջորդի կարգավիճակ ունեցող անձը:~~

~~Հոդված 3. Հատուցման կարգը~~

~~1. Սույն օրենքով նախատեսված հատուցման չափը, կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:~~

~~2. Սույն օրենքի իմաստով ոչ նյութական վնասի հատուցման կարգը եւ չափը որոշելիս Հայաստանի Հանրապետության Կառավարությունը պարտավոր է կյանքից զրկված յուրաքանչյուր քաղաքացու մասով փոխհատուցման չափը որոշելիս առաջնորդվել տուժողներին հատուցման ողջամտության, արդարացիության եւ համաչափության սկզբունքներով:~~

~~3. Սույն օրենքի իմաստով ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դրա նկատմամբ չեն գործում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ոչ նյութական վնասի չափի նկատմամբ սահմանափակումները:~~

~~4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշմամբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը պարտավոր է սահմանել նաեւ սույն օրենքի իմաստով շահառուներին վճարման ենթակա նյութական վնասի հատուցման կարգը եւ չափը՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 2-րդ մասում նշված սկզբունքները:~~

~~5. Սույն օրենքի իմաստով շահառուին հատուցման գումարը վճարվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված ժամկետում:~~

~~ԳԼՈՒԽ 2~~

~~ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ~~

~~*Հոդված 4. Օրենքի ուժի մեջ մտնելը*~~

~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը։~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՑ 2-Ը ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-015-18.02.2019,15.04.2019-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի փոփոխության, լրացման հեղինակը	**Օրենքի նախագիծը, նախագծի մասը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	**5**
1	**Պատգամավոր Լենա Նազարյան** **Կառավարություն**	Նախագիծ	Նախագիծը ներկայացնել լրամշակված հետևյալ տարբերակով. «**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան** 1. Սույն օրենքով կարգավորվում են 2008 թվականի փետրվարի 19-ին Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքների կապակցությամբ բողոքի հավաքները ցրելու գործողությունների ընթացքում՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:	**Ընդունվել է** կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է**

			Հոդված 2. Աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձինք 1. Աջակցություն ստանալու իրավունք ունի՝ 1) սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի պատճառով զոհված (մահացած) անձի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով իրավահաջորդի կարգավիճակ ունեցող անձը. 2) այն անձը, որի առողջությանը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս: **Հոդված 3. Աջակցության տրամադրումը** 1.Աջակցության ձևը, չափը և տրամադրման կարգը, ինչպես նաև աջակցության տրամադրման համար դիմումի ձևը, կցվող փաստաթղթերի ցանկը և քննարկման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: 2.Աջակցություն ստանալու իրավուք ունեցող անձինք դիմումը կարող են ներկայացնել սույն հոդվածի 1-ին մասով		

			նախատեսված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում: **Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: 2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:»		
2	**Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան**	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ «Անձի առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը հաստատվում են դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ:»	**Ընդունվել է** կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է**
	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ իր ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ծանր կամ միջին ծանրության	**Ընդունվել է** կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է**

			վնաս ստացած անձն աջակցություն ստանալու իրավունք ունի, եթե նշված գործողություններին իր մասնակցության առնչությամբ չի ենթարկվել քրեական հետապնդման, ինչպես նաև նրա նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող հիմքով կամ կայացվել է արդարացման դատավճիռ:»		
	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «3. Եթե սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված անձի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակվում է, ապա տվյալ անձին աջակցություն տրամադրելու համար դիմումը քննարկվում է նրա նկատմամբ քրեական հետապնդման հարցը որոշելուց հետո:»	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է**